ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ԴԻՆԱՐԻ ԿՈՐԳԱՆՈՎԻ՝ ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԵՐԱԺՇՏԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

(Մահվան 100-ամյակի առթիվ)

Ա. Դ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Դենարի Կորգանովը (Դենարիոս Ղորղանյան, 1858—1890) անցյալ դարի հայ երաժշտական արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկն է, որը թեև կարճատև կյանք է ունեցել, բայց աչքի է ընկել ստեղծագործական իր բազմակողմանի և արգասավոր գործունեությամբ։ Կորգանովը հանդես է եկել որպես փայլուն դաշնակահար, ճանաչված կոմպոզիտոր, երաժշտական քննադատ և մանկավարժ, երաժշտահասարակական եռանդուն գործիչ, որ բացառիկ նախանձախնդրությամբ էր ծառայում հայրենի միջավայրում երաժշտական կյանքի աշխուժացմանը, երաժշտական գործի կազմակերպմանը։

Դենարի Կորգանովը ծնվել ու դաստիարակվել է ցարական բանակի գեներալ Հովսեփ Ղորղանյանի (Կորգանով) բազմանդամ ընտանիքում։ Հայ գեներալի բոլոր վեց զավակներն էլ երաժիշտներ են դարձել. դուստրերը՝ Նունեն, Հեղինեն և Մարիան՝ երգչուհիներ, երեք որդիներից երկուսը՝ Հովհաննեսը և Կոստանդինը՝ երգիչներ, իսկ որդիներից ամենակրտսերը՝ Դենարին, բազմաշնորհ երաժիշտ-դաշնակահար։ Բացի Դենարիից իրենց արտիստական տաղանդով առանձնապես ճանաչված էին քույրերից երկուսը՝ Նինա (Նունե) Կորգանովա-Դարիալին և Հրեանա (Հեղինե) Տերյան-Կորգանովան, որոնք ժամանակին երգել են Ռուսաստանի և եվրոպական օպերային տարբեր բեմերում, ինչպես նաև աչքի ընկել վոկալ մանկավարժության ասպարեզում ունեցած վաստակով։

Անցյալ դարի 60—70-ական թթ. Ղորղանյանների հարգված և հյուրընկալ տունը փաստորեն վերածվեց երաժշտական սալոնի, ուր պարբերաբար անցկացվող երաժշտական երեկոներին մշտապես հնչում էին արևմտաեվրոպական և ռուս դասական կոմպոզիտորների երկերը, ինչպես նաև ժամանակի առավել հետաքրքրական երաժշտական նորույթները։ Այսպիսով, երաժշտական այդ նշանավոր ընտանիքը բավական նպաստավոր դեր էր կատարում Թիֆլիսի արվեստասերների միջավայրում, ճաշակ ու սեր պատվաստելով երաժշտարվեստի բազմատեսակ գանձերի նկատմամբ։

Դենարի Կորգանովը ծնվել է 1858 թ. ապրիլի 30-ին, Կվարելիում (Կախեթիա)։ Դեռևս 4 տարեկանից նա սկսել է նվագել, զարմանալի թեթևությամբ արտաբերելով իր լսած երաժշտական մոտիվները։ Դենարիի երաժշտական ընդունակությունների զարգացմանը վաղ տարիներին հետևում էին ավագ քույրերը, իսկ 1867-ից նրա դաստատուն է դառնում Թիֆլիսում հաստատված հայտնի դաշնակահար-մանկավարժ Է. Էպշտեյնը (Ի. Մոշելեսի սանը), որը մեծ ուշադրություն և ջանք է նվիրում խոստումնալից երեխայի պարապմունքներին, արտակարգ բարձր գնահատելով նրա երաժշտական-կատարողական տվյալները։ Էպշտեյնի մոտ Դենարիի ուսումնառությունը տևում է մինչև 1872 թ. իսկ այնուհետև նա մեկնում է Պետերբուրգ՝ շարունակելու իր պարապմունքները կոնսերվատորիայում։ Այստեղ նա սովորել է երեք տա-

րի, ապա ուսումը շարունակել Լայպցիգի կոնսերվատորիայում (1874—75 թթ.)։ Լայպցիգից Գենարին նորից վերադառնում է Պետերբուրգի կոնսերվատորիա, երաժշտական իր բարձրագույն կրթությունն ավարտելով հանուն մանկավարժ-երաժիշտներ Գ. Կրոսսի և Լ. Բրասսենի ղեկավարությամբ։ Ստանալով հիմնավոր երաժշտական կրթություն, Գ. Կորգանովը 1879-ին մեկնում է հայրենի քաղաք՝ Թիֆլիս, ուր և սկսվում է նրա ակտիվ գործունեությունը երաժշտական բազմազան ոլորտներում։

Գենարի Կորգանովը, ինչպես հայտնի է, ո՛չ հուշագրություններ է թողել, ո՛չ ինքնակենսագրություն, հրապարակի վրա համարյա չկան նաև նրա նամակները, ուստի Կորգանովի ուսման տարիների, ինչպես և հետագա գործունեության մասին անհրաժեշտ տեղեկություններ ու տվյալներ քաղելու համար ստիպված դիմել ենք ժամանակակիցների հուշերին կամ էլ մամուլում զետեղված նյութերին։ Այդ առումով կարևոր աղբյուր է Կորգանովի վաղեմի ընկերոջ՝ կոմպոզիտոր Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի գիրքը, որ կոչվում է «Ռուս երաժշտության 50 տարին իմ հուշերում»։ Այստեղ Իպոլիտով-Իվանովը հաճախ է հիշում իր հայ ընկերոջ մասին։ Նա գրում է. «Ես կոնսերվատորիա եմ ընդունվել դաշնակահարներ Բետինգի, Ալիխանովի, Կորգանովի, Վինոգրադսկու և Բենեշի, ջութակահար Գորսկու, թավջութակահար Գլենի, տեսաբաններ Արենսկու և Կաղաչենկոյի հետ միաժամանակ։ Հետագա տարիներին մեզ միացան նաև Սաֆոնովը, Տարտակովը, Զարուդնայան և Ֆ. Մ. Բլումենֆելդը»[1]։

Երկուսն էլ արտակարգ շնորհալի երաժիշտներ՝ Կորգանովը և Իպոլիտով-Իվանովը դեռևս այն ժամանակվանից փոխադարձ նվիրվածությամբ են վերաբերվել միմյանց, սովորաբար միասին են հաճախել համերգներ, ինչպես և մասնակցել են ընտանեկան շատ հավաքույթների, որ կազմակերպվում էին տարբեր առիթներով։ Իպոլիտով-Իվանովից բացի կոնսերվատորիայում Կորգանովի մոտիկ ընկերներն էին նաև ջութակահար Կ. Գորսկին, դաշնակահար Լ. Բետինգը, որոնց հետագայում Իպոլիտով-Իվանովը, Կորգանովը և Ալիխանովը Թիֆլիս հրավիրեցին, ուր բավական տևական մի ժամանակամիջոցում նրանք աշխատում էին որպես երաժիշտ-կատարողներ և մանկավարժներ։

Վերհիշելով պետերբուրգյան ուսման տարիները, Իպոլիտով-Իվանովը գրում է. «Կոնսերվատորիայում վերջին տարիներին ես մտերմացա տաղանդավոր դաշնակահար և կոմպոզիտոր Գ. Օ. Կորգանովի հետ և մենք միասին հաճախ էինք լինում Զավրիևների հայ ընտանիքում, որոնց դուստրը սովորում էր կոնսերվատորիայում։ Նրանց մոտ նվագարկելու համար հաճախակի էին հավաքվում կոնսերվատորիայի դասընկերները և կովկասցի մի քանի ուսանողներ»[2]։

1895-ին լույս տեսած իր մի հոդվածում Իպոլիտով-Իվանովը ի միջի այլոց նշել է, որ հենց Գ. Կորգանովի շնորհիվ է նա մշտական շփման մեջ մտնում Պետերբուրգի ուսանողների կովկասյան համայնքի հետ։ «Այստեղ,— ասում է նա,— ինձ վիճակվեց առաջին անգամ ծանոթանալ կովկասյան մեղեդիների բնույթին և հմայքին, հենց այստեղ էլ իմ մեջ ծագեց Կովկաս այցելելու միտքը»[3]։

Կովկասցի ուսանողները և առաջին հերթին Իպոլիտով-Իվանովի մտերիմ դասընկերները շատ առիթներ են ունենում պատմելու Կովկասի մասին, մի երկրի, որ պոետական վսեմ ներշնչումների աղբյուր է եղել հանճարեղ Լերմոնտովի համար։ Եվ այսպես, աստիճանաբար սկսում է աճել երիտասարդ ռուս երաժշտի հետաքրքրությունը Կովկասի կյանքի ու բնաշխարհի հանդեպ։ «Իմ

---

1 М. М. Ипполитов-Иванов. 50 лет русской музыки в моих воспоминаниях. М., 1934, с. 18.

2 Նույն տեղում, էջ 23—24։

3 «Артист». СПб., книга I, 1895, № 45, с. 131.

բոլոր մտորումները,—մտաբերում է այնուհետև Իպոլիտով-Իվանովը,—ուղղված էին այն բանին, որ այցելեմ Կովկաս՝ այդ հեքիաթային երկիրը... Դրան նաև նպաստում էին իմ բարեկամների՝ համալսարանի վրացի ուսանողներ Անդրոնիկովների և կոնսերվատորիայի հայ դասընկերների՝ դաշնակահար Ալիխանովի ու կոմպոզիտոր Կորգանովի պատմածները։ Իմ այդ բարեկամները, ինչպես և Պետերբուրգի կովկասյան ամբողջ գաղութը ինձ լիովին հմայեցին իրենց ջերմ ու սրտագին վերաբերմունքով»[4]։

Կոնսերվատորիան ավարտելուց հետո, Ռուսական երաժշտական ընկերության գլխավոր դիրեկցիայի առաջարկով Իպոլիտով-Իվանովը 1882-ին Թիֆլիս է մեկնում՝ մշտապես աշխատելու։ Այդ ժամանակ Թիֆլիսում արդեն գոյություն ուներ երաժշտական դպրոց, որ հիմնադրվել էր 1876-ին։ Ինչպես հայտնի է, մինչ դպրոցի կազմակերպումը Թիֆլիսում գործում էին Խ. Սավանելիի երգչախմբային անվճար դասընթացները։ Սավանելիի գործն ընդլայնելու նպատակով շուտով նրան են միանում իր ընկերները՝ Կ. Ալիխանովն ու Ա. Միղանդարին, և երգչախմբային դասընթացների փոխարեն, այդ երեք երաժիշտների համատեղ ջանքերի շնորհիվ, երաժշտական դպրոց է բացվում։ Դա առաջին պրոֆեսիոնալ երաժշտական դպրոցն էր ամբողջ Անդրկովկասում։ Այստեղ երգչախմբային դասարանը վարում էր Խ. Սավանելին, դաշնամուրայինը՝ Կ. Ալիխանովը և Ա. Միղանդարին, իսկ 1880-ից՝ նաև Գ. Կորգանովը։ Այսպիսով, Իպոլիտով-Իվանովի Թիֆլիս ժամանելու պահին (1882-ի հոկտեմբեր) դպրոցն արդեն 6 տարվա պատմություն ուներ։

«Ես Թիֆլիս ժամանեցի,— հիշում է Իպոլիտով-Իվանովը,—ուշ երեկոյան և տեղավորվեցի «Կովկաս» հյուրանոցում... Առավոտյան գնացի փընտրելու իմ բարեկամներին, և առաջին հերթին Գ. Օ. Կորգանովին, որի հետ ես ավելի սերտ մտերմական հարաբերությունների մեջ էի, քան Կ. Մ. Ալիխանովի։ Հանդիպելով, մենք միասին մշակեցինք մեր հետագա անելիքների ծրագիրը, դիտեցինք քաղաքը, հետո էլ եղանք երաժշտական դպրոցում... Կորգանովին հանդիպելուց հետո, նույն օրը այցելեցի Կ. Մ. Ալիխանովին, որն այն ժամանակ դպրոցի գլխավոր ղեկավարն էր, և նրան պաշտոնապես հանձնեցի Ռուսական երաժշտական ընկերության գլխավոր դիրեկցիայի առաջարկությունը՝ Թիֆլիսում երաժշտական ընկերության բաժանմունք բացելու վերաբերյալ»[5]։

Իպոլիտով-Իվանովի Թիֆլիսում հաստատվելը բավական աշխուժացնում է քաղաքի երաժշտական կյանքը։ Նրա նախաձեռնած առաջին գործերից մեկը 1882-ի նոյեմբերի 5-ի սիմֆոնիկ համերգն էր (այն նվիրված էր Է. Էպշտեյնի երաժշտական գործունեության 35-ամյակին)։ Սիմֆոնիկ համերգին մասնակցել են Գ. Կորգանովը, Ե. Գարսևանովան և օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախումբը՝ Մ. Մ. Իպոլիտով-Իվանովի ղեկավարությամբ։ Դրանով իսկ սկսվում է Թիֆլիսի երաժշտական կյանքի ընդհանուր ինտենսիվացումը։

---

4 «Советская музыка», 1933, № 3, с. 151.

5 М. М. Иполитов-Иванов. 50 лет..., с. 41—43.

Երաժշտական դպրոցը 1884-ին վերածվում է ուսումնարանի՝ միջնակարգ ուսումնական հաստատության, ենթարկվելով Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի նորաստեղծ բաժանմունքին։ 1884-ի սեպտեմբերից, Թիֆլիսի ռուսական օպերայում, որ չորս տարի էր, ինչ կազմակերպվել էր, որպես գլխավոր դիրիժոր է հրավիրվում նույն Մ. Մ. Իպոլիտով-Իվանովը։ Թիֆլիսի ռուսական օպերան 1882-ից աշխատում էր Իվ. Ե. Փիթոևի (Փիթոյանի) ղեկավարությամբ։ Իր ձեռքը վերցնելով օպերային խումբը, Փիթոևը ձգտում էր աշխուժացնել թատրոնի երկացանկը և այս գործում առանձնապես մեծ նախաձեռնություն էր հանդես բերում Իպոլիտով-Իվանովը՝ թատրոնի գլխավոր դիրիժորը։ Ընդհանրապես, Թիֆլիսում երաժշտական կարևոր բարեփոխումների ակտիվ ու համոզված կողմնակիցներն ու կիրառողներն էին, բացի Իպոլիտով-Իվանովից, Գ. Կորգանովը, Կ. Ալիխանովը, Ա. Միղանդարին, Ս. Սավանելին, Վ. Զարուդնայան, Լ. Բետինգը, Կ. Գորսկին և ուրիշներ։

1886-ի ապրիլին առաջին անգամ Թիֆլիս է այցելում ռուս մեծահռչակ կոմպոզիտոր Պ. Ի. Չայկովսկին։ Այդ առթիվ օպերային թատրոնը վերաբեմադրում է «Մազեպան»։ Բացի այդ, նախապատրաստվում է նրա երկերին նվիրված սիմֆոնիկ մեծ համերգ, որ տեղի է ունենում ապրիլի 19-ին՝ կոմպոզիտորի ներկայությամբ։ Լսարանը համերգի սկզբին Չայկովսկուն արտակարգ սիրալիր է դիմավորում, անվերջանալի օվացիաներով։ Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի և երաժշտական ուսումնարանի անունից հանճարեղ կոմպոզիտորին ողջույնի սրտագին խոսք է ասում Կ. Մ. Ալիխանովը։ Համերգին մասնակցում են օպերային նվագախումբը և երգչախումբը՝ Իպոլիտով-Իվանովի ղեկավարությամբ, իսկ որպես մենակատարներ հանդես են գալիս դաշնակահար Գ. Կորգանովը, երգչուհի Վ. Զարուդնայան (սոպրանո), երգիչ Պ. Լոգին (տենոր), ջութակահար Կ. Գորսկին։ Գ. Կորգանովը համերգում կատարում է Չայկովսկու դաշնամուրային ստեղծագործությունները՝ նոկտյուրնը (F dur) և սկերցոն (h moll)։ Բացի այդ, Կորգանովը մամուլում գետեղում է նաև «Մազեպայի» վերաբեմադրությանը նվիրված գրախոսություն, ջերմորեն գնահատելով Չայկովսկու այդ հիանալի օպերայի կատարումը Թիֆլիսի բեմում[6]։

Չայկովսկին իր այցելության կապակցությամբ 1886-ի ապրիլին ֆոն Մեկկին ուղարկած իր նամակում գրել է. «Թիֆլիսում են ապրում մի քանի լավ, ականավոր երաժիշտներ։ Նրանցից առանձնանում են տաղանդավոր կոմպոզիտոր Իպոլիտով-Իվանովը և Գենարի Կորգանովը՝ հայ դաշնակահար, Պետերբուրգի կոնսերվատորիայի նախկին ուսանող։ Նրանք ինձ ցույց են տալիս ամենայն ուշադրություն, և թեպետ ես կնախընտրեի ինկոգնիտո մնալ այստեղ, բայց չեմ կարող չգգացվել իմ նկատմամբ արվեստակիցներիս ունեցած համակրության և սիրո արտահայտությունից։ Ընդհանրապես, ես չէի սպասում, որ Թիֆլիսում իմ երաժշտությունը այդքան լավ գիտեն։ Այստեղ իմ օպերաներն ավելի շատ են նվագում, քան որևէ այլ տեղ, և առանձնապես «Մազեպան» մեծ հաջողություն ունի»[7]։

Երկրորդ անգամ Չայկովսկին Թիֆլիս է ժամանում հաջորդ տարվա մայիսի 30-ին։ Նա մինչև հունիսի 10-ը մնում է Թիֆլիսում և ապա մեկնում Բորժոմ՝ հանգստանալու։ Չայկովսկու Թիֆլիսում գտնվելու ժամանակ Իպոլիտով-Իվանովը բացակայում էր քաղաքից։ Ինչպես Չայկովսկու նախորդ այցելության օրերին, այս անգամ նույնպես Գ. Կորգանովն անչափ մտահոգվում է, որպեսզի մեծ կոմպոզիտորի օրերը Թիֆլիսում արդյունավետ ու հաճելի անցնեն։ Չայկովսկուն նախ և առաջ հետաքրքրում է Իպոլիտով-Իվանովի նոր օպերան՝ «Ռուֆը», որ 1887-ի հունվարին բեմ էր հանվել Թիֆլիսում։

Այդ մասին է պատմում Գենարի Կորգանովի՝ Իպոլիտով-Իվանովին

---

6 Տե՛ս «Кавказ», 27 апреля 1886.

7 П. И. Чайковский. Переписка с Н. Ф. фон Мекк. Т. III, М.—Л., 1936, с. 413.

հասցեագրած անտիպ նամակը, որ վերջերս մեզ հաջողվեց հայտնաբերել Գրականության և արվեստի կենտրոնական պետական արխիվում (ЦГАЛИ)։ Այն գրված է 1887-ի հունիսի 24-ին։

Կորգանովն այս նամակում Իպոլիտով-Իվանովին ուրախալի լուր է հայտնում այն մասին, որ Չայկովսկին «հիացած է «Ռուֆի» երաժշտությունից»։

Նամակն ուշագրավ է նախ և առաջ նրանով, որ փաստական նոր նյութ է տալիս մեզ հայ երաժշտի՝ Չայկովսկու հետ ունեցած հանդիպումների մասին։ Ինչպես պարզ երևում է նրա շարադրանքից, Չայկովսկին բացառիկ ուշադրություն է նվիրել Իպոլիտով-Իվանովի ստեղծագործությանը, հետևել երիտասարդ կոմպոզիտորի նոր հղացումների իրականացմանը, սրտանց խրախուսելով նրա ստեղծագործական աշխատանքի արդյունքները։ Չայկովսկու հեղինակավոր կարծիքը «Ռուֆի» երաժշտության մասին, որ Կորգանովը հաղորդել է Իպոլիտով-Իվանովին, անշուշտ, երիտասարդ հեղինակի համար շատ էական նշանակություն ուներ, քանի որ Իպոլիտով-Իվանովին վստահություն էր ներշնչում իր ուժերի նկատմամբ, քաջալերում նրա ստեղծագործական նախաձեռնությունը։ Վերջապես, նամակը մի ավելորդ անգամ վկայում է, թե որքան սերտ մտերմությամբ են միմյանց հետ կապված եղել Կորգանովը և Իպոլիտով-Իվանովը։ Նամակի շարունակության մեջ Կորգանովը պատմում է նաև իր գործերից. «Ամբողջ օրը նստած եմ տանը,— գրում է նա,— շատ եմ հորինում։ Նախերգանքի փորագրումը պատրաստ է մինչև Allegro-ն։ Ենթադրում եմ մնացածն ավարտել Բորժոմում, ուր կմեկնեմ հուլիսի 19-ին, այսինքն քրոջս արտասահման գնալուց հետո»[8]։

Կորգանովը երաժշտական ասպարեզում բազմակողմանի հետաքրքրություններ ուներ։ Աչքի ընկնելով աշխույժ բնավորությամբ, նա երբեք չէր կտրվում երաժշտական եռուզեռից, չէր մեկուսանում շրջապատից։ Թիֆլիսի երաժշտական առօրյայում իրականացվող քիչ թե շատ նշանակալից ամեն մի նոր քայլ դժվար էր պատկերացնել առանց Գ. Կորգանովի մասնակցության։ Նա սիրահոժար մասնակցում էր բարեգործական նպատակով տրվող տարբեր տիպի համերգներին, երեկոներին, գիտակցելով դրանց հասարակական մեծ նշանակությունը։ Ընդհանրապես նրա բնավորությունը շրջապատին առինքնում էր սրտամոտությամբ և բարեսրտությամբ, մարդկանց նկատմամբ կարեկից ու անկաշառ վերաբերմունքով, արժանիքներ, որոնք մեծացնում էին նրա բարի համբավը։ Իր նվագով, կատարողական բառձր արվեստով նա սիրված էր ամենուրեք։ Նրա ելույթները մշտապես խանդավառ ընդունելության էին արժանանում։ Ժամանակակիցները նշել են Գենարիի նվագի հազվագյուտ ներգործող ուժը, մասնավորապես նրա այն բացառիկ ձիրքը, որի շնորհիվ դաշնամուրը դառնում էր պարզապես «խոսուն գործիք»։ Գենարիի կրտսեր ժամանակակցի՝ հայտնի երաժշտագետ Վասիլ Կորգանովի վկայությամբ՝ «նա կարողանում էր զարմանալի վարպետությամբ հաղորդել կատարվող ստեղծագործության ոգին»[9]։

Մամուլը բազմիցս նշել է նրա դաշնամուրային նվագի նուրբ հնչողությունը՝ գեղեցիկ տուշեն, որով նա գունավորում էր հնչյունը, նվագին հաղորդելով արտահայտչորեն վառ ու քնքուշ հնչերանգներ։ Իր նվագում նույնպիսի հմտությամբ նա կարողանում էր օգտվել նաև արտահայտչության այնպիսի հնարներից, ինչպիսիք են դինամիկայի ագոգիկ կարգի միջոցները։

Կորգանովը առիթներ շատ է ունեցել շարադրելու իր հայացքները երաժշտական արվեստի տարբեր հարցերի մասին։ Նրա ասույթներն արտա-

---

[8] Կորգանովի նամակի տողերից պարզ չէ, թե ինչ նախերգանքի մասին է նրա խոսքը։ Դա կարող էր լինել ըստ Վ. Հյուգոյի սյուժեի իր սկսած «Մարիոն դը Լորմ» օպերայի նախերգանքը։

[9] В. Д. Кортанов. Кавказская музыка. Тифлис, 1908, с. 69.

հայտում են ժամանակի երաժշտական առաջադիմական միտումները, սերտորեն առնչվում ռեալիստական երաժշտության նոր սկզբունքներին։

Իր ստեղծագործական և կատարողական գործունեությանը զուգընթաց Կորգանովը հանդես է եկել որպես երաժշտական քննադատ՝ աշխատակցել է Թիֆլիսում լույս տեսնող «Кавказ» թերթին։ Նրա գրախոսությունները գլխավորապես վերաբերում են օպերային թատրոնի բեմադրություններին և կարևորագույն համերգներին։ Այդ գրախոսություններում բավական հստակ են արտացոլված Կորգանովի էսթետիկական ըմբռնումները, նրա գեղարվեստական ճաշակն ու առաջադիմական դիրքորոշումը երաժշտական շարժման կարևոր հարցերում։

Ամենից առաջ նշենք, որ Կորգանովը մամուլում հետևողականորեն պաշտպանել է օպերային դասական երաժշտության նմուշները մշտապես պրոպագանդելու անհրաժեշտությունը։ Միաժամանակ նա քննադատել է XIX դարի 30—40-ական թթ. իտալական որոշ օպերաներում նկատվող շտամպը, երաժշտադրամատուրգիական շաբլոնը, գերապատվություն տալով ռեալիստական օպերային երաժշտությանը։ Հետևելով Թիֆլիսի օպերային թատրոնի խաղացանկին, Կորգանովն իրավացիորեն նկատել է. «Ինչը մեզ անհասկանալի է մնում՝ դա «Ռուսլան և Լյուդմիլայի» բացակայությունն է խաղացանկում։ Պարոն Փիթոևի մեջ մենք գովելի ձգտում ենք նկատել՝ Թիֆլիսի հասարակությանը ծանոթացնել դասական արվեստի լավագույն ստեղծագործություններին և մեզ առավել ևս տարօրինակ է թվում «Ռուսլանի»՝ ռուս երաժշտության այդ հիմնաքարի բացակայությունը այն ժամանակ, երբ նույն այդ խաղացանկում կան այնպիսի օպերաներ, ինչպիսիք են Շելի «Թամարան» և Սոլովյովի «Կորդիլիան»։ Ռուս երաժշտության շահերը ամենևին էլ չէին տուժի, եթե այդ երկուսի փոխարեն լիներ միայն «Ռուսլանը»[10]։

Մի այլ անգամ՝ «Իվան Սուսանինի» ստեղծման 50-ամյակի առթիվ, 1886-ի նոյեմբերի 27-ին Կորգանովը հանդես է եկել մի հոդվածով, ուր բավական հանգամանորեն խոսում է Գլինկայի առաջին օպերայի հազվագյուտ արժանիքների մասին, այն համարելով գարագլուխ կազմող երևույթ ռուս օպերային գրականության մեջ։ «Դարեր կանցնեն,— գրում է այնտեղ Կորգանովը,— իսկ օպերայի ինտրոդուկցիան և «В бурю, в грозу» խմբերգը, լեհերի հետ Սուսանինի տեսարանը (անտառում), «Փառաբանվիր» ֆինալը անթառամ կմնան որպես օպերային ստեղծագործության գլուխգործոցներ»։

Ինչպես ասացինք, Կորգանովի գրախոսություններում անցյալ դարի առաջին կեսի իտալական առաձին օպերաների նկատմամբ քննադատական վերաբերմունք է արտահայտված։ Այդպիսի քննադատությամբ նա կարծես արձագանքում էր Զայկովսկուն և ռուս հեղինակավոր այլ երաժիշտների, որոնք չէին հանդուրժում այն շաբլոնն ու հնասովորությունը, որ արմատացել էր իտալական օպերային երաժշտության որոշ ստեղծագործություններում։

Կորգանովը Զայկովսկու երկրպագուներից էր։ Նա հիանալի գիտեր Զայկովսկու ամենալավագույն երկերից մեկի՝ դաշնամուրային առաջին կոնցերտի մասին, Կորգանովն իր մի գրախոսության մեջ այսպես է գրել. «Համերգի ծրագիրը հաջող էր կազմված։ Հենց միայն Զայկովսկու դաշնամուրային կոնցերտը հսկայական հետաքրքրություն էր ներկայացնում, մանավանդ, որ այն Թիֆլիսում առաջին անգամն է կատարվում։ Զայկովսկու առաջին դաշնամուրային կոնցերտը նշանավոր տեղ է գրավում ոչ միայն մեծատաղանդ կոմպոզիտորի երկերի, այլև ամբողջ դաշնամուրային գրականության մեջ, մի բան, որ, ի դեպ, ընդունում են նույնիսկ Զայկովսկու հակառակորդները։ Լսելով այդ կոնցերտը, չգիտես թե ավելի շատ ինչի՞ վրա զարմանաս՝ թեմատիկ հնարամտության հարստությա՞ն, նմանը չունեցող գործիքավորման՞, կամ թե ֆանտաստիկ կոլորիտի՞, որով երանգավորված է այդ ամբողջ ստեղծագործությունը։ Կոնցերտի երեք մասերն էլ այնքան գեղեցիկ են,

10 «Кавказ», 2 сентября 1886.

այնքան հետաքրքիր, որ նույնիսկ դժվար է նրանցից որևէ մեկը նախընտրել։ Կատարողի համար Չայկովսկու կոնցերտը վիթխարի դժվարություններ է պարունակում թե՛ տեխնիկական և թե՛ ֆրազավորման տեսակետից։ Դաշնակահարուհի Կալինովսկայան այս ստեղծագործության կատարման ընթացքում ամբողջ փայլով ներկայացրեց իր մեծ տաղանդը»[11]։

Կորգանովը մի այլ գրախոսության մեջ աննկարելի մեղանչում է համարել Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում Լենսկու արիայի կատարման ժամանակ թույլ տրված ինքնահնարանքները։

Ժամանակին Կորգանովը գրախոսել է Թիֆլիսի օպերային թատրոնի մի շարք ներկայացումներ, այդ թվում՝ «Եվգենի Օնեգինը», «Օրլեանի կույսը», «Դևը», «Կարմենը», «Աիդան», «Սևիլյան սափրիչը», «Նորման» և այլն։

Կորգանովի գրախոսությունները վկայում են, որ նրան միշտ էլ ուրախացրել է ինչպես այս կամ այն նոր բեմադրության, այնպես էլ առանձին արտիստների հաջողությունը։ Բայց և քիչ չեն գրախոսի քննադատական դիտողությունները, որ նա արել է օպերային ներկայացումների գեղարվեստական մեկնաբանման մեջ երաժշտական-բեմական կարգի թերությունները շտկելու բարի նպատակով։ Նա ըստ արժանավույն է գնահատել Թիֆլիսի օպերայի առաջատար ուժերին՝ նրանց ստեղծած լավագույն կերպարների համար։

Կորգանովի հավանությանն են արժանացել Պրյանիշնիկովի Դեր, Յակովլեի Էսկամիլիոն և Օնեգինը, Մոլչանովսկու Դոն Բազիլիոն, Կլյամժինսկայայի Անառնիդան և Միքայելան, Կամենսկայայի Ամներիսը, Յեղար-Ինսարովայի Տատյանան և այլն։ Դրա հետ միասին Կորգանովին չի բավարարել որոշ ներկայացումների գեղարվեստական մակարդակը։ Իր գրախոսություններից մեկում նա բավական խիստ է արտահայտվում «Աֆրիկուհին» ներկայացման մասին, նշում է վերջինիս էական թերությունները, այդ հիման վրա եզրակացնելով, որ ընդհանուր առմամբ օպերայի բեմադրությունն անփույթ է[12]։

Գենարի Կորգանովը որպես երաժիշտ շատ խստապահանջ է եղել իր նկատմամբ և իր համերգային ելույթներին սովորաբար նա պատրաստվել է մեծ ջանասիրությամբ։ Մեր նշած համերգներից բացի, տարբեր ժամանակ նա բազմաթիվ այլ ելույթներ է ունեցել ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Ռուսաստանի քաղաքներում։ Դրանք մեծ մասամբ խառն համերգներ են եղել, որոնց, Կորգանովի հետ միասին, մասնակցել են գլխավորապես Թիֆլիսի ճանաչված երգիչներն ու երաժիշտները։ Ստորև բերում ենք որոշ տվյալներ Կորգանովի համերգային ելույթների վերաբերյալ՝ օգտվելով ռուսական և հայ մամուլի թռուցիկ հաղորդումներից։ Դրանք թեև շատ թերի են, բայց իբրև փաստական նյութ, անտարակույս, արժանի են ուշադրության։

1884, մարտի 9, Կորգանովի համերգը Թիֆլիսում, մասնակցությամբ Գորսկու, Լևիցկու, Ռյաբինինի, Տորիանիի և Մարարետիի։

1884, նոյեմբերի 30, Թիֆլիս. Կորգանովի համերգը՝ մասնակցությամբ իր քրոջ՝ Ե. Տերյան-Կորգանովայի, Կ. Գորսկու և Պ. Օպոչինինի։

1885, մարտի 29, խառը համերգ Թիֆլիսում, մասնակցությամբ Ք. Կարա-Մուրզայի երգեցիկ խմբի, Գ. Կորգանովի, Կ. Գորսկու, Տեր-Ստեփանովի, Ռյաբինինի, Պախոմովի և Կոշևոյ-Լևիցկու։

1886, հունվարի 30. Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի 5-րդ համերգ-հավաքույթը։ Այստեղ Կորգանովը մասնակցել է Շումանի դաշնամուրային կվարտետի (Op. 47) կատարմանը, հանդես գալով անսամբլի կազմում որպես դաշնակահար. համերգ-հավաքույթին մասնակցել են նաև երգչուհի Սմիռնովան և ջութակահար Գորսկին։

1886, ապրիլի սկզբին, Թիֆլիս. Կորգանովի և երգչուհի Բիչուրինայի համերգը։

---

11 «Кавказ», 9 ноября 1886.

12 «Кавказ», 13 июня 1886.

1886, մայիսի 10, Թիֆլիս. Գ. Կորգանովի, երգչուհի Ասլամազովայի և ջութակահար Նահապետյանի համերգը (այստեղ Կորգանովը կատարում է իր հեղինակած «Հայկական ռապսոդիան»)։

1886, մայիսի 17, Թիֆլիս. Նինա Կորգանովա-Դարիալիի և Գենարի Կորգանովի համերգը՝ օպերային սիմֆոնիկ նվագախմբի մասնակցությամբ (դիրիժոր՝ Մ. Իպոլիտով-Իվանով)։

1888, դեկտեմբերի 21. Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի 20-րդ համերգ-հավաքույթը. ելույթ են ունեցել Գ. Կորգանովը, Վ. Զարուդնայան, Կ. Գորսկին և բաժանմունքի մշտական լարային կվարտետը։

1889, մարտի 16, Մոսկվա. Ե. Տերյան-Կորգանովայի և Գ. Կորգանովի համերգը։

1890-ի փետրվարից Կորգանովը Կայսերական թատրոնի նախկին պրիմադոննա, երգչուհի Է. Պավլովսկայայի հետ մեկտեղ Ռուսաստանի քաղաքներում համերգներ է տալիս։ Այդ մասին նախապես հաղորդել է «Артист» հանդեսը։ Նրանք լինում են Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, ապա այցելում Դոնի Ռոստով։ Նույն այդ հանդեսում տպագրվել է նաև Ռոստովից ուղարկված հետևյալ հաղորդումը. «Մեծ պասի շրջանը մեզ մոտ, ինչպես և ամենուր, համերգներով սկսվեց։ Առաջին նախաձեռնությունը արեցին կայսերական թատրոնների արտիստներ Զեռնովը և Մարկովսկայան։ Դրան հետևեց Կայսերական թատրոնի նախկին պրիմադոննա, երգչուհի Պավլովսկայայի, երգիչ Պավլովսկու և դաշնակահար Կորգանովի համերգը։ Պավլովսկայայի երբեմնի հիանալի ձայնը ժամանակի ազդեցությամբ անշուշտ տուժել է, և արտիստուհին, թեև հաջողություն ունեցավ, բայց ոչ այն հաջողությունը, որ նա ունեցել էր այստեղ, Ռոստովում՝ 8 տարի առաջ։ Դաշնակահար Կորգանովին շատ ծափահարեցին՝ տաղանդավոր կերպով կատարած ստեղծագործությունների համար»[13]։

Երգչուհի Պավլովսկայայի հետ տված համերգների մասին գրել է նաև ինքը՝ Գ. Կորգանովը՝ եղբորը հասցեագրած վերջին նամակում. «Այսօր Պավլովսկայայի հետ մեր առաջին համերգն էր այստեղ, որ բավական լավ եկամուտ բերեց և հսկայական հաջողություն։ Ես այնպիսի նյարդային վիճակի մեջ եմ, որ նույնիսկ քնել չեմ կարողանում։ Առավոտյան գնում ենք Չերկասկ, ուր երեկոյան համերգ ենք տալու, իսկ այնուհետև կլինենք Եկատերինոդարում, ապա Նորից Ռոստով, Տագանրոգ, Խարկով»[14]։

Վերն ասացինք, որ Գ. Կորգանովն անչափ սիրում էր Չայկովսկու ստեղծագործությունը և դրա հետ մեկտեղ, բացառիկ ակնածանք ուներ նրա անձնավորության նկատմամբ։ Հանճարեղ կոմպոզիտորի հետ երիտասարդ երաժշտի հանդիպումներն անջնջելի մնացին նրա հիշողության մեջ։ Կորգանովը բախտ ունեցավ, բացի այդ, մոտիկից շփվելու նաև այնպիսի խոշորագույն երաժիշտների հետ, ինչպիսիք են Ա. Գ. Ռուբինշտեյնը, Ս. Ի. Տանեևը։ Վերջինիս մոտ Կորգանովն սկսել է կոմպոզիցիայի գծով պարապել 1889-ի սեպտեմբերից։ Թե որքան հմայված էր Գենարին իր ուսուցչով, դա կարելի է տեսնել եղբորը գրած նրա նամակի հետևյալ տողերից։ «Ես շատ եմ գոհ և եռանդագին զբաղվել եմ խիստ ոճի կոնտրապունկտով ու XVI դարի եկեղեցական ոճով։ Ս. Ի. Տանեևը (որ այդ գործում հմուտ վարպետ է), Պ. Ի. Չայկովսկու հանձնարարականով, մեծ սիրով և, հասկանալի է՝ անվճար, պարապում է ինձ հետ։ Տանեևը մի այնպիսի սքանչելի մարդ է, որ չեմ կարող բառերով արտահայտել։ Պատկերացրու, նա այնպես է սիրում իր գործը, որ չնայած իր բազմաթիվ պարապմունքներին, և շաբաթվա մեջ երկու անգամ նշանակված դասերին՝ երբ ես նրա մոտ էի գնում, նա հնար էր գտնում շաբաթվա ընթացքում նաև ինձ մոտ գալ և առանց մուշտակը հանելու 3—4

[13] «Артист», СПб., 1890, № 7.

[14] В. Д. Корганов. Кавказская музыка, с. 70.

ժամ պարապել ինձ հետ։ Ես նրանից անսահման շնորհակալ եմ և շատ բանով նրան պարտական»[15]։

Նույնպիսի հիացմունքով է արտահայտվում Կորգանովը Ա. Դ. Ռուբինշտեյնի մասին, մի մարդու, որ իր արվեստակիցներին ընդհանրապես բավական զուսպ է վերաբերվել և ժլատ է եղել խրախուսելու մեջ։ «Ես չգիտեմ,— գրում է Կորգանովը Ռուբինշտեյնի մասին,—թե այլոց վրա ինչպես, բայց ինձ վրա իր անձնավորությամբ նա մեծ տպավորություն է գործում։ Հարկավո՞ր է արդյոք քեզ ասել, որ նա իր սիրալիրությամբ կախարդել է ինձ։ Այնպիսի մարդ է նա, որ քաղաքավարությունից գրգված ինձ չէր հրավիրի իր մոտ և ընդհանրապես, եթե մեկին չի համակրում, ապա չի կարող դա ծածկել... Մշտապես ճաշի էր հրավիրում ինձ, քարշ տվեց կոնսերվատորիայի ներկայացմանը և ինձ էլ կողքը նստեցրեց, հետո միասին մեկնեցինք կովկասյան երեկույթին և այլն։ Նա անձնապես ինձ համակրում է և խրախուսում իմ կոմպոզիտորական ընդունակությունները»[16]։

Կորգանովը խորապես գնահատում էր ժամանակի մեծ երաժիշտների բարեկամական ուշադրությունն իր նկատմամբ։ Ի դեմս Կորգանովի նրանք տեսնում էին շնորհառատ և շատ խոստումնալից մի երաժշտի, միաժամանակ նկատելով նաև, որ ստեղծագործության ասպարեզում նա դեռևս կատարելագործվելու կարիք ունի։

Եվ ահա, ինքնակատարելագործման տենչով խանդավառված՝ երիտասարդ կոմպոզիտորը թողեց հայրենի քաղաքը, Մոսկվա մեկնեց և դարձավ Տանեևի աշակերտը։

Այժմ արդեն՝ Թիֆլիսյան տարիների անհոգությունից սթափված՝ նա իրեն երջանիկ էր զգում, որ վերջապես գտել է մի նոր ճանապարհ, որ իսկական տքնությամբ նա պիտի հարթեր իր համար։

Բայց երիտասարդի հանդեպ ճակատագիրը չափազանց անողոք գտնվեց։ Կորգանովը հանկարծամահ եղավ 1890-ի մարտի 9-ին, Դոնի Ռոստովի կայարանում՝ իր հերթական համերգը Եկատերինոդարում անցկացնելուց հետո։ Նրա այս համերգային ուղևորության ծրագրում նշված էր նաև համերգ Նոր Նախիջևանի իր հայրենակիցների համար, որտեղ նա երկու տարի առաջ նվագել էր, ունենալով բացառիկ հաջողություն։ Այս անգամ, հայրենակիցները, մասնավորապես Թատերասիրաց ընկերությունը, նախօրոք պատրաստել էին արծաթյա ոսկեջրած շքեղ մի պսակ՝ իրենց սիրելի հայրենակցին մատուցելու մտադրությամբ, որի վրա փորագրված էր հատկապես այս սպասվող հանդիպման առիթով Ռափայել Պատկանյանի հորինած հետևյալ քառատող-նվերբողը.

Դու մեր հոգին հրճվեցուցիր
Երկնապարգև քո ձիրքով
և հայ բեմը զարդարեցիր.
արդ պսակվի՛ մեր ձեռքով[17]։

Ավա՜ղ, բաղձալի այդ հանդիպումը չկայացավ և պատրաստված պսակը Գենարիի դագաղի հետ ուղարկվեց Թիֆլիս, ուր Գենարին թաղվեց Խոջիվանքի գերեզմանոցում։ Կորգանովի մահը ցնցեց հայ հասարակությանը, մանավանդ նրա արվեստի երկրպագուներին։ «Մարտի 18-ին,—գրում է «Մշակը»,— Խոջիվանքի գերեզմանատանը տեղի ունեցավ Գ. Ղորղանյանի թաղումը։ Թեև այդ օրը եղանակը շատ անախորժ էր և ցուրտ քամի էր փչում, այնուամենայնիվ, գերեզմանոցում հավաքվել էր հանգուցյալի տաղանդը հարգողների մի ահագին բազմություն»[18]։ Հայ արվեստասերները, ինչպես նշել է «Արձա-

15 Նույն տեղում, էջ 71։
16 Նույն տեղում, էջ 71։
17 «Մշակ», 1890, № 30։
18 «Մշակ», 1890, № 32։

դունքը», «աղի արցունքով ու այրված սրտով» հողին հանձնեցին իրենց սիրելի երաժշտին, որի հետ այնքան սպասելիքներ էին կապում։

«Մեր հայրենակից, երիտասարդ, նշանավոր տաղանդներից մեկը այլևս չկա այսօր,— գրել է «Արձագանքը»։ Ծննդավայրից հեռու, օտար քաղաքում, «հայրենի կտուրի տակից» հեռացած, ազգական-բարեկամներից բաժանված՝ դու, սիրելի Գենարի, փչում ես քո վերջին շունչը։

Մոտ 15 տարի շարունակ դու աշխույժով շունչ ու կենդանություն տվեցիր մեզ համար անխոս գործիքներին։ Մեզանից ո՞վ չէր ճանաչում նրան՝ ոչ միայն որպես երաժիշտ-հորինողի, այլև որպես քաջահմուտ նվագող դաշնակահարի, որի նրբությամբ զարնող մատների տակ դաշնամուրը ասես լեղու էր առնում և բարբառում մեր ականջին իբրև խոսող մի գործիք։

Թիֆլիսի նշանավոր սազանդարների երգերն ու երաժշտությունը, անշուշտ, իրենց ազդեցությունն ունեցան նրա վրա՝ հիշեցնելով իր ծննդավայր երկրի եղանակները։ Մեզ ծանոթ արևելյան մեղեդիները, որ ուշադրությամբ ու վարպետի ականջով էր լսում մեր տաղանդավոր երաժիշտը, մի՛ւռ ու գազափար տվին նրան իր գործունեության մեջ։ Դրա ապացույցը կարող են լինել վաղամեռիկ երաժշտի մանավանդ հին ու նոր բայաթիները, որ արդեն ժողովրդականացել են գրեթե ամբողջ Ռուսաստանում»[19]։

Կորգանովի անժամանակ մահվան լուրը խոր վշտով ընդունեցին ոչ միայն նրա հայրենակիցները, այլև ռուս արվեստակիցներն ու բարեկամները։

«Գենարի Կորգանովի մահը,—գրել է Չայկովսկին Իպոլիտով-Իվանովին,—ինձ շատ, շատ վշտացրեց։ Նզովյալ այդ կճատը գարշելի է ընդհանրապես, բայց երբ նա մարդուն հարթում է իր ուժերի ծաղկման պահին,—ես նրան առանձնապես եմ ատում։ Համատում եմ, որ Գենիչկայի մահը մեզ վրա առանձնապես ծանր պիտի ազդեր։ Ի դեմս նրա դու կորցրիր հավատարիմ և նվիրված բարեկամին»[20]։

Վաղամեռիկ սիրելի ընկերոջ՝ Գ. Կորգանովի հիշատակին Իպոլիտով-Իվանովը նվիրեց իր լավագույն սիմֆոնիկ ստեղծագործություններից մեկը՝ «Հայկական ռապսոդիան»՝ գրված 1894—95 թթ։

Գ. Կորգանովի ստեղծագործությունների մի զգալի մասը ժամանակին հրատարակվել է և բավական հաճախ է կատարվել։ Առանձնապես տարածված էին նրա ռոմանսները, որ գլխավորապես հրատարակվում էին Պետերբուրգում՝ Բիտտների և Մոսկվայում՝ Գուտխեյլի կողմից։

1904 թ. ռուսերեն թարգմանաբար լույս ընծայված «Երաժշտական բառարանը», որի հեղինակն է Գուգո Ռիմանը, Կորգանովի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ տվյալներ զետեղեց, Կորգանովին ներկայացնելով որպես տաղանդավոր դաշնակահար և կոմպոզիտոր։ Բառարանում հատկապես նշված էին հայ կոմպոզիտորի մելոդիկ ռոմանսները, դաշնամուրային առաբեսկները, ակվարելները։

Կորգանովի ռոմանսներին է անդրադարձել նաև ռուս ականավոր երաժշտագետ Ն. Ֆինդեյզենը՝ ռուս գեղարվեստական երգին նվիրված իր աշխատության մեջ, ուր Կորգանովը բնութագրված է որպես տաղանդավոր ռոմանսիստ։ Բայց այստեղ Ֆինդեյզենը Կորգանովի ստեղծագործությունը դիտում է իբրև ռուս երաժշտության երևույթ։

Նա գրել է. «Գենարի Կորգանովին... ըստ տաղանդի և տեխնիկայի չի կարելի դասել մեր դիլետանտների շարքը[21]։ Ա. Ռուբինշտեյնը գնահատում էր երիտասարդ ստեղծագործողին՝ որպես Կովկասի տված առաջին կոմպոզիտորին (Կորգանովը բնիկ Թիֆլիսեցի է)։ Ցավալի է, որ կոմպոզիտորը այդքան վաղաժամ վախճանվեց,— նրա թողած երգերը հեղինակի անտարակու-

19 «Արձագանք», 1890, № 5, էջ 5։

20 В. Д. Корганов. Чайковский на Кавказе. Ереван, 1940, с. 70.

21 Ֆինդեյզենի խոսքն այստեղ այսպես կոչված ուշ շրջանի դիլետանտների մասին է. (Ն. Աֆանասև, Պ. Բուլախով, Ի. Դոնաուրով, Վ. Պասխալով, Գ. Լիշին և ուրիշներ)։

սելի տաղանդն են վկայում։ Արտասահմանում և մեր կոնսերվատորիայում ուսումնառությունն իր կնիքն է դրել Կորգանովի ստեղծագործության բնույթի վրա, ուստի և արդարացի կլիներ նրան դասել «պահպանողական» ռոմանսիստների խմբին։ Կորգանովի լավագույն ռոմանսների թվին են պատկանում ժողովրդականություն վայելող «Դոն-Ժուանի սերենադը», «Դու ծնվել ես բոցավառելու համար», «Ինչի մասին՝ գիշերային լռության մեջ» էլեգիան, «Սուր տապարով խոցված է կեչին» և այլն։ Դրանց մեջ տրամադրություն կա, ըստ երաժշտության դրանք բոլորն էլ գեղեցիկ են և արտահայտիչ»[22]։

Ըստ Ֆինդեյզենի, ռուս ռոմանսային երաժշտության մեջ «պահպանողական» ուղղությանն են պատկանել Ա. Ռուբինշտեյնը, Կ. Դավիդովը, Է. Նապրավնիկը։ Ֆինդեյզենը նրանց է միացրել նաև Կորգանովին։ Բայց եթե Ֆինդեյզենի հիշատակած առաջին երեք հեղինակները ռուս իրականության ծնունդ են եղել, և որ ոչ պակաս կարևոր է՝ ապրել են իրենց ստեղծագործական լիակատար հասունությունը, ապա նույնը չի կարելի ասել Կորգանովի մասին։ Կորգանովը, ինչպես գիտենք, չհաշված ուսումնառության տարիները, իր կյանքն անց է կացրել հայրենի միջավայրում՝ ամուր կապված մնալով անգրկովկասյան ժողովուրդների երաժշտական-մշակութային առօրյայի հետ։ Ասենք և այն, որ Կորգանովը դեռ «չէր գտել իրեն», դեռ որոնումների մեջ էր, թեև գնալով մեծանում էր նրա միանգամայն բնական հետաքրքրությունը ազգային երաժշտական թեմատիկայի նկատմամբ։ Իսկ այս հանգամանքը դժբախտաբար դուրս է մնացել Ֆինդեյզենի տեսադաշտից։ Հիշեցնելով Ա. Ռուբինշտեյնի խոսքերն այն մասին, որ Կորգանովը Կովկասի տված առաջին պրոֆեսիոնալ կոմպոզիտորն է, Ֆինդեյզենը շրջանցել է Ռուբինշտեյնի ասույթի բուն նշանակությունը։ Հնարավոր է, որ Ֆինդեյզենը Կորգանովի ռոմանսներից բացի չգիտեր նրա մնացյալ երկերը։ Մինչդեռ Կորգանովի ամբողջ ստեղծագործությանը ուշադիր հետևողը, անշուշտ, կնկատեր երիտասարդ հեղինակի որոշ գործերում արդեն նշմարվող ազգային ուրույն հատկանիշները, ճիշտ է՝ արտահայտված դեռևս թույլ և երկչոտ։ Հիշենք, օրինակ, «Պաղ աղբյուրի մոտ» հայկական երգի մշակումը, նրա դաշնամուրային գործերից «Բայաթիները», Կովկասյան և հայկական ռապսոդիաները։ Անժխտելի փաստ է և խորապես նշանակալից, որ Կորգանովը հայ պրոֆեսիոնալ երաժշտության սկզբնավորման շրջանում ամենաառաջիններից մեկն էր, եթե ոչ առաջինը, որ իր ստեղծագործության մեջ օգտագործեց հայրենի ժողովրդական մեղեդիները։

Գենարի Կորգանովի ստեղծագործությունները աչքի են ընկել իսկապես բարձր պրոֆեսիոնալ արժանիքներով և պատահական չէ, որ արժանացել են ժամանակի ամենահեղինակավոր երաժիշտների ուշադրությանն ու գնահատությանը։ Լինելով հմուտ երաժիշտ-դաշնակահար, նա խորապես ուսումնասիրել է ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից երաժշտական գրականության տարբեր ժանրերն ու ձևերը, նրանց կոմպոզիցիոն բնորոշ առանձնահատկությունները։ Այդ են հավաստում նրա թե՛ դաշնամուրային երկերը և թե՛ ռոմանսները։ Տարբեր բնույթի նրա դաշնամուրային պիեսներին հատկանշական է հարմոնիկ շարադրանքի հստակությունը, ընտրված ֆակտուրային միջոցների գրավիչ բազմազանությունը, մելոդիկայի ուրույն արտահայտությունը և ձևակառուցման ամբողջականությունը։ Այդ իմաստով հատկապես արժանի են ուշադրության կովկասյան և հայկական ռապսոդիաները, դաշնամուրային էտյուդներն ու արաբեսկները։ Պատահական չէ, որ Կորգանովի դաշնամուրային էտյուդները, որ առանձնապես գրավիչ են իրենց բազմազան ու հնարամիտ ֆակտուրային միջոցներով, ժամանակին ընդունվել են Լայպցիգի կոնսերվատորիայի կողմից՝ որպես ակադեմիական ծրա-

---

22 Н. Финдейзен. Русская художественная песня (романс), исторический очерк развития. СПб., 1905, с. 49.

գրով հանձնարարվող երկեր։ Հիշարժան են նույնպես կորգանովյան «Արաբեսկները» իրենց բնութագրական մելոդիկայով։

Ինչ վերաբերում է նրա ռոմանսներին, ապա չի կարելի չընդունել, որ դրանք հարում են ռուս ռոմանսային լիրիկային և անտարակույս կրում են ռուս մեծ կոմպոզիտորների, մասնավորապես Ռիմսկի-Կորսակովի և Չայկովսկու ազդեցությունը։ Կորգանովի ռոմանսներում պարզ երևում է նրանց մերձավորությունը ռուսական ռոմանսային լիրիկային, այդ լիրիկայի համար բնորոշ գեղարվեստական կերպարներին, տարբեր հոգեվիճակներ արտահայտող հուզական նուրբ տրամադրություններին։ Իր ռոմանսներում նա գլխավորապես դիմել է այն բանաստեղծներին, որոնց գրական տեքստերը ժամանակին արժանացել են Չայկովսկու և Ռիմսկի-Կորսակովի ուշադրությանը։ Այդ բանաստեղծներից են Ա. Պուշկինը, Ա. Կ. Տոլստոյը, Մ. Մայկովը, Լ. Մեյը, Ա. Ֆետը, Ն. Շչերբինան և այլոք։ Որոշ դեպքերում էլ Կորգանովը նույնիսկ վերստին դիմել է Չայկովսկու և Ռիմսկի-Կորսակովի ռոմանսներում օգտագործված բանաստեղծական տեքստերին[23]։ Կարևորն այն է, որ Կորգանովը հայ երաժշտության պատմության մեջ առաջինն անդրադարձավ ռուսական պոեզիայի սքանչելի կերպարներին, որոնք անկեղծորեն հուզել ու ստեղծագործորեն ներշնչել են երիտասարդ հայ հեղինակին։

Գենարի Կորգանովի ստեղծագործական ժառանգությունը շատ ճշգրիտ է բնութագրել հայ անվանի երաժշտագետ Ալեքսանդր Շահվերդյանը։ «Կորգանովը,— գրել է նա,—դաշնամուրային և վոկալ ռոմանսային երաժշտության ոլորտում գործող արտակարգ շնորհալի կոմպոզիտոր էր։ Նրա «արևմտյան» ձգտումները (ռոմանտիկների, առանձնապես Շումանի ոճի նկատմամբ ունեցած ստեղծագործական հետաքրքրությունը) սրբագրվել են Ռիմսկի-Կորսակովի և Չայկովսկու երաժշտության դրական ազդեցությամբ։ Ազգային-ոճային իր որոնումների սահմանափակությամբ հանդերձ... Կորգանովը հայ երաժշտության մեջ մուծեց որոշակի և նշանակալից ավանդ, ամրացնելով նրա կապերը ռուսական հարուստ կուլտուրայի հետ։ Ռուս երաժշտության և արևմտյան ռոմանտիկների ժանրերը, ձևերն ու փորձը հայ երաժշտական կուլտուրայի ասպարեզը փոխադրելու նրա ձգտումը մի օրինաչափ քայլ էր դեպի պրոֆեսիոնալիզմի հաստատումը, դեպի հայ երաժշտության ընդհանուր կուլտուրական մտահորիզոնի ընդլայնումը»[24]։

Գ. Կորգանովը անցյալ դարի առաջին հայ պրոֆեսիոնալ երաժիշտներից էր, որն իր ստեղծագործական և կատարողական գործունեության մեջ լայնորեն հենվում էր ռուս և արևմտաեվրոպական երաժշտության փորձի և ավանդույթների վրա։ Իր արվեստով, իր ստեղծագործական հղացումներով նա ձգտում էր յուրովի արձագանքել ժամանակի ոգուն, նրա թելադրած գեղարվեստական նոր պահանջներին։

Կորգանովի ստեղծագործական կյանքը, որ անչափ վաղ ընդհատվեց, անտարակույս, նշանակալից եղավ հայ ազգային պրոֆեսիոնալ երաժշտության զարգացման, նրա նոր և կարևոր խնդիրների լուծման համար։

Նշելով Գ. Կորգանովի մահվան 100-ամյակը, մեր երաժշտական հասարակայնությունը իր խոր հարգանքի տուրքն է մատուցում նրա անուրանալի ստեղծագործական վաստակին։

---

23 Այսպես, Կորգանովը օգտագործել է բանաստեղծական այն տեքստերը, որոնց հիման վրա է Չայկովսկին ստեղծել իր «Դոն-ժուանի serenադը» (Ա. Կ. Տոլստոյ), «Ինչպես թեժ մոխրի վրա» (Ֆ. Տյուտչև), «Նոր հունական երգը» (Ա. Մայկով), իսկ Ռիմսկի-Կորսակովը՝ «Հարավային գիշերը» (Ն. Շչերբինա), «Ինչի մասին՝ գիշերային լռության մեջ» (Ա. Մայկով), «Հրեական երգը» (Լ. Մեյ) և այլն։

24 Ա. Շահվերդյան. Հայ երաժշտության պատմության ակնարկներ. Երևան, 1959, էջ 231—232։

ЖИЗНЬ И ДЕЯТЕЛЬНОСТЬ ВЫДАЮЩЕГОСЯ АРМЯНСКОГО МУЗЫКАНТА ГЕНАРИЯ КОРГАНОВА

(К 100-летию со дня смерти)

А. Г. ТАТЕВОСЯН

Резюме

Г. О. Корганов (1858—1890)—талантливый армянский пианист, композитор, музыкальный критик, педагог и общественный деятель второй половины прошлого столетия. Родился он в семье генерала Овсепа Корганяна (Корганова), в детские годы учился у известного педагога-музыканта Э. Эпштейна, затем продолжил учебу в Лейпцигской и Петербургской консерваториях. Превосходный музыкант, он с большим успехом выступал не только в родном Тифлисе, но и в других городах России. Его сочинения, в частности романсы, в 80-х годах XIX в. изданы нотоиздателями Гутхейлом (Москва) и Биттнером (Петербург). Популярны были его романсы—«Серенада Дон Жуана» (сл. А. К. Толстого), «Еврейская песня» (сл. Л. Мея), «Острой секирой» (сл. А. К. Толстого), «О чем в тиши ночной» (сл. А. Майкова), «Южная ночь» и др. Среди инструментальных сочинений Корганова—Кавказская и Армянская рапсодии, фортепианные акварели, арабески, вальсы, мазурки, этюды (последние в свое время были приняты и рекомендованы учебной программой Лейпцигской консерватории). По окончании Петербургской консерватории Г. Корганов обосновался в родном Тифлисе, являясь одним из энергичных деятелей Тифлисского отделения Русского музыкального общества. Корганову выпало счастье не только близко общаться с такими композиторами как П. Чайковский, А. Рубинштейн, С. Танеев, но и пользоваться их благожелательной и дружеской поддержкой. По рекомендации Чайковского с 1889 г. Корганов брал уроки по композиции в Москве у С. Танеева. Внезапная кончина молодого музыканта после очередного концерта с глубокой скорбью была воспринята как соотечественниками, так и многочисленными русскими друзьями и почитателями. Похоронили Г. Корганова в Тифлисе. Г. О. Корганов один из первых профессионалов композиторов в армянской действительности, деятельность которого служила дальнейшему прогрессу национального музыкального искусства.